

ՔԱՅՈՒՄ ՄԱՐՏԻԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

1969 տարւոյ Յուլիսի 21ին, նախկին ժառ. Վարժարանի փոքր, քառակուսի շէնքին մէջ կատարուած էր բացումը առժամեայ կերպով հաստատուած Ս. Աթոռոյս Գանձերը ցուցադրող Թանգարանին: Քանի մը ամիսներու ընթացքին բազմաթիւ օտարներ այցելած էին Թանգարանը եւ սքանչացումով դիտած Հայ մանրանկարչութեան, ասեղնագործութեան եւ այլ մանր արուեստներու նմոշները: Վանական Վարչութիւնը որոշում տուաւ ապա մնայուն Թանգարանի մը հաստատման. աւելի ընդարձակ շէնքի մը մէջ, որուն համար յարմարագոյն նկատուեցաւ ժառնգ. Վարժարանի երկյարկանի հին շէնքը: Հարկ եղաւ սպասել Ալեքս եւ Մարի Մանուկեան պատուական ամուլէն բարերարուած վարժարանի նոր շէնքի կառուցման աւարտին, ուր փութագրուեցաւ ուսանողութիւնը 1976 Սեպտեմբերին: Անկէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր ղիմումին վրայ,



Տէր եւ Տիկին Մարտիկեաններ կը կսրեն ժապաւենը՝ Թանգարանի մուտքին:

իր բարերարութեամբը հանրածանօթ Ամերիկահայ Տիար Էտուրթ Մարտիկեան եւ իր շնորհալի տիկինը՝ Հելէն սիրայօժար կերպով խոստացան տրամադրել հարկ եղած գումարը, հիմնական նորոգութեան ենթարկելու 136 տարուան հնութիւն ունեցող բազմասենեակ այդ շէնքը: Նորոգութիւնները աւարտած ըլլալով, Թանգարանի բացումը կատարուեցաւ 18 Ապրիլ, Չորեքշաբթի երեկոյեան ժամը 6ին, ի ներկայութեան ազնուա-

մեծար բարերարներուն, որոնց հետ ժամանած էր նաեւ ՄԱԿի մօտ Միացեալ Նահանգաց Դեսպան Տիար Սէթ Մումճեան, իր ազնուափայլ տիկնոջը հետ եւ խումբ մը Ամերիկահայ ազգայիններ: Հրաւիրեալներու կարգին էին քոյր յարանուանութիւններէ հոգեւորական ներկայացուցիչներ եւ բարձրաստիճան պետական անձնաւորութիւններ:

Գերաշնորհ Տ. Շահէ Արքեպիսկոպոս հրաւիրեց Պատրիարք Սրբազանը խօսք առնելու Թանգարանի րացման առթիւ: Իրեն յայտնի պերճախօսութեամբ, Նորին Ամենապատուութիւնը շեշտեց Հայ Արուեստի Թանգարանի մը կարեւորութիւնը: «Արդար հպարտութեամբ կու գանք ցոյց տալու քաղաքակիրթ աշխարհին մեր հայրերու ստեղծագործ ձեռքերուն գեղեցիկ վաստակը: Թանգարանը հայելին է հայ ժողովուրդի մշակոյթին: Քիչ տեղեր կան աշխարհի վրայ, ուր այդ մշակոյթի ստեղծագործութիւնները դիմացած ըլլան պատմութեան աւերիչ հարուածներուն, ինչպէս է երուսաղէմի Հայոց Վանքը: Ուրախ ենք որ Կիւլպէնկեան Մատենադարանի, Ալեքս եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարանի եւ Սիրոնի վրայ բարձրացող տաճարի կողքին այժմ կը կենայ եղուարդ եւ Հելէն Մարտիկեան Թանգարանը: ... Մենք ճանչցանք Պր. Մարտիկեանի մէջ զեկափար հայ անձնաւորութիւն մը, որ գիտէ գեղին մետաղը եւ կանաչ թուղթը վերածել արժէքի: Այդ է իր մեծ արժանիքը ...»: Եւ ապա՝ Նորին Ամենապատուութիւնը ներկայացուց Տէր եւ Տիկին Մարտիկեաններու նոր հրատարակուած փառաւոր հատորը՝ «Treasures of the Armenian Patriarchate of Jerusalem»:

Գեղեցիկ խօսքով մը յարգելի բարերարը պատասխանեց Պատրիարք Սրբազանին եւ յայտնեց իր ուրախութիւնը որ իրականութիւն դարձաւ Թանգարանը, յարերբարար կարճ ժամանակի մը մէջ, որուն համար նրախտապարտ է Պատրիարք Սրբազանին:

Երուսաղէմի Քաղաքապետ Տիար Թէտի Քօլլէք բեմ բարձրացաւ արտայայտելու համար իր բարձր գնահատանքը Պատրիարքարանին եւ բարերարին, որոնք բերին մեծ նպաստ մը երուսաղէմի, բանալով հայ արուեստի եւ պատմութեան գեղեցիկ սրբավայր մը եւս:

Պատուարժան հիւրերը հիւրասիրուեցան զւովացուցիչներով, յետոյ այցելեցին նորարաց Թանգարանի այլազան բաժինները:

